# «ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2024թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ֆյուչր կապիտալ մարկետ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ղեկավարությունը հայտարարում է, որ պատասխանատվություն է կրում.

1) Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, մասնավորապես՝
   ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից դրա հաստատման և հետևողականորեն կիրառման համար,
   բ. հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
   գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների պահպանման, իսկ վերոնշյալ ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
   դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
   ե. Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար, ընդ որում Ընկերության ղեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը:
2) Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ՖՀՄՍ-ներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
3) Ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Գործադիր տնօրեն — Արեն Հակոբյան

Գլխավոր հաշվապահ — Գայանե Թովմասյան

19.03.2025թ.